

Այս ենթադրութեան պատճառ կը համարուի 1102ին շրջան ընող միջնադարեան հետաքրքրական աւանդութիւն մը դոր պահած է Seawulf. «Հերակլ կայսրը այս դռնէն Երուսաղէմ կը մտնէ՝ երբ ան յաղթական կը դառնար Պարսկաստանէն «Սաչափայտը» կրելով, բայց քարերը առաջին անգամ վար ինկան և փակեցին անցքը. այնպէս որ դուռը փայտակոյտ մը դարձաւ, մինչեւ որ ան հրեշտակի մը ազգարարութեան վրայ խոնարհելով՝ ձիէն վար իջաւ և մուտքը բացուեցաւ իր առջև» (E. T. P. էջ 40):

Յուստինիանոսի շինուածքը 527ին կատարուած էր. քառասուն տարի յետոյ եկող ուխտաւոր մը «Գեղեցիկ դուռը գտած էր աւերեալ վիճակի մէջ իր սեամովը եւ հիմքովը»: Որով դժուար կ'ըլլայ հաւատալ թէ արդի դուռը Յուստինիանոսի կողմէ շինուած ըլլայ: Միւս կողմէն, դրան երկու կողմին միակտուր մեծ քարերը որ աւելի դէպի հիւսիս և աւելի դէպի հարաւ՝ դրան ոտքերը կը կազմեն եւ Անտոնինոսէն ծանօթագրուած հաւանական «հիմքերը» են, շատ հին և նախաքրիստոնէական ժամանակ Հրեաներու կողմէ շինուած Տաճարին դուռներէն մին եղած է, հաւանաբար «Մփկաթ»ի դուռը (Նեհեմի, Գ. 31): «Ոսկի դուռ» անունը երկու սխալներու արդիւնք է, այսինքն, առաջին՝ այն ենթադրութիւնը թէ այս ճոխապէս զարդարուած բիւզանդական դուռը կրնայ ըլլալ Գործք Առաքելոցի (Գ. 2 և 10) մէջ յիշուած «Գեղեցիկ դուռը»: Երկրորդ՝ «Գեղեցիկ» նշանակութեամբ յունարէն «Horiaia», բառին փոփոխութիւնը լատիներէն «Aurea» բառին՝ որ կը նշանակէ «ոսկի»:

Տեղացի ուղեցոյց թարգմաններու ըսածին նայելով՝ իսլամները Ոսկի դուռը որմափակուած կը պա-